ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2025թ. հուլիսի 7 -ին, N 182 -Ա

ԱՆՈՒՇ ԲԵՅԲՈՒԹՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՐԱԳԱԾԻ Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 37.1-ին, 37.2-րդ, 37.3-րդ կետերով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 1653-Ա որոշմամբ ձևավորված հանձնաժողովի նիստի 2025 թվականի հունիսի 19-ի N 300 արձանագրությունը, Ա. Բեյբությանի 2025 թվականի հուլիսի 4-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2025 թվականի հուլիսի 8-ից Անուշ Ջանիբեկի Բեյբությանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արագածի Դ.Դեմիրճյանի անվան հ.1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 1 տարի փորձաշրջանով:
2. Անուշ Բեյբությանի Փորձաշրջանի ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Շենավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հայկ Եղիազարյանին:
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արագածի Դ.Դեմիրճյանի անվան հ.1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Արագածի Դ.Դեմիրճյանի անվան հ.1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անուշ Բեյբությանի վրա:

Irrecoverable Signature

VERIFIED OCSP 7/8/2025 13:07:32 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ